Խորոր, Կենդիս, Սունէյլա, Գորգոր, Մըրգանց, Թարախտ, Անգճիֆ, Փագիֆ[1], Կադմիր, Եագիրկի, Վաղշան, Կոչուխտոր, *Ալեկանց, Երբանց, Քէյանց*,[2], *Խարդումաս*

բաւոր աղբիւրներ են հոսում, այնպէս որ Սպերցիները այս Բիւրակն-Բինգեօլ լեռները իրենց դիւցազանց բնակարան են համարում։ Այստեղ էլ կան բազմաթիւ ճակ-ճահճներ, որոնք պատած են մշտադալար մարգերով եւ անտառներով։ Նոյն իսկ խաղտիքի բնակչութեան համար, որոնք տարածւում են մինչեւ Սեւ ծովի ափերը, մանաւանդ Կալապոտամոս վտակի շրջապատի գեղացիների, մինչեւ Բիզէ եւ Օֆաւանների — նաւահանգիստների ժողովրդի համար ուխտատեղի եւ սրբավայր է։ "Ամանն ու Զէնջանդ" վէպի հերոսները այս լեռների անմահ դիւցազներից են եւ երգիչների համար անվերջ վիպական հերոսների աղբիւր ու ակունք են կազմում։ Հայաստանի մէջ քառասուն դեց լեռներ, ձորեր շատ կան. բայց Պարխարի քառասունքը գերազանց են իրենց Զուարթնոց առասպելներով։

1 Փագիկ կամ Փագիֆ եւ Խարդումաս գեղերի մօտ աւերակների թումբերը այցելուի ուշադրութիւնն են գրաւում իրենց հնութիւններով, որոնց կտորները — սրբատաշ քարեր, աղիւսեայ քանդակներն եւ կաւեղէնները ցոյց են տալիս, որ ժամանակին, այդ տեղերում մեծ բնակութիւն է եղել։ Փագ, Փագիֆ կամ Փէյիր ՀՈՐՈՒԽԻ Աւազանի բնակչութեան բարբառով Քրիստ. թէ Խալամ = աւերակ շէնների, կործանուած քաղաքներնի մնացորդների = աւերակներ նշանակութիւն ունին. իսկ Խարդումասը յիշեցնում է Եփրատի ափերում, Միդանայի մօտ Կոմմագէնի Խարդումանը։

2 Խապիր աւանից 3—4 կիլոմետր հեռաւորութեամբ, նրա արեւմտեան կողմը ՀՈՐՈՒԽԻ գեղազուարճ մի անկիւնում, բարձունքների վրայ կանգնած է մի գեղ, որին թրքախօսները Մաղանս են անուանում. իսկ Հայերը Մեծանձ։ Սրա գիրքը, աւերակները ու այգեստաններն ցոյց են տալիս, որ մի ժամանակ Սպերի տեր Նախարարները ապրել են այս ոստանում եւ այնտեղից իշխել են ոչ միայն ամբողջ հովտին — Սպերին, այլ եւ Բաբերդին — Սմբատաւանին ու Բալախոռին։